

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ
ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01**

ք.Երևան

«16» «հունվարի» 2026թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ՝ Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Արմենակ Խաչատրյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս կազմակերպության ղեկավար Խաչատուր Ղազեյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր) ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1910-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 09 բաժնի, 04 խմբի, 02 դասի «1111. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր» ծրագրի «12005. Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում» միջոցառման (այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

1.1. Սույն Պայմանագրով Պատվիրատուն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կատարողին հատկացնել Որոշմամբ նախատեսված տարեկան կտրվածքով մինչև 125 416 600 (մեկ հարյուր քսանհինգ միլիոն չորս հարյուր տասնվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային (աճողական) բաշխվածությանը համապատասխան՝ ամսական համամասնություններով համաձայն Հավելվածի, իսկ Կատարողը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և սույն Պայմանագրով սահմանված կազով:

1.2. Ծրագրով նախատեսված միջոցների շրջանակում Կատարողը ստանձնում է 82 ուսանողի մասնագիտական կրթության իրականացման պարտավորությունները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցները հատկացնել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված չափաքանակներով

2.1.2 Պարբերաբար վերլուծել Կատարողի կողմից կատարված ծախսերը, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման համար:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ անմիջականորեն չմիջամտելով վերջինիս գործունեությանը:

2.2.2. Կատարողից պահանջել ներկայացնելու հաշվետվություն կամ այլ պահանջվող տեղեկատվություն:

2.2.3 Պարբերաբար վերահսկել ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը:

2.2.4. Վերահսկել Կատարողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.2.5. Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում Աշխատակազմի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան հաշվառում:

2.3.2. Ապահովել սույն պայմանագրի 1.2 կետում նախատեսված պարտավորությունների իրականացումը:

2.3.3. Պատվիրատուի առաջին իսկ պահանջով ներկայացնել աշխատանքների կազմակերպման, կատարման և միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ պահանջվող տեղեկատվություն:

2.3.4. Պատվիրատուին ներկայացնել Ծրագրի կատարման կատարման վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 8-ը և տարեկան ամփոփ հաշվետվություն՝ մինչև հաջորդող տարվա փետրվարի 2-ը:

Ներկայացվող հաշվետվությունների համար ուղեցույց են հանդիսանում ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված Հ-2 և Հ-8 ձևերը:

2.3.5. Հաշվետու տարվա վերջում Ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

2.4. Կատարողը իրավունք ունի՝

2.4.1. Իր կողմից իրականացվող աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Պատվիրատուին:

2.4.2 Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

3. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Պայմանագրի 1.1 կետում նշված գումարը Պատվիրատուն վճարում է Կատարողին ամսական կտրվածքով՝ նրա կողմից ներկայացված գրավոր պահանջի հիման վրա:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

5.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը կարգավորվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության
հրապարակ, Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011018380
ՀՎՀՀ 02505554

ԿԱՏԱՐՈՂ

«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Կիևյան 8
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018005646
ՀՎՀՀ 00035088



